Ավետիք Իսահակյան

Հայրենի՛ հողի վրա եմ նորից

Հայրենի՛ հողի վրա եմ նորից,
Նորից մանկական աչքով տեսնում եմ՝
Հավերժից դիտող աստղերն հրեղեն,
Հրաշք է դառնում աշխարհն ինձ նորից:

Ուրախ քրքիջով վազում է կայտառ
Իմ հին խաղընկեր գետակը փայլուն,
Տեսնում եմ նրա զմրուխտ հայելում
Ծաղկի պես ցնծուն՝ պատկերս պայծառ:

Կապույտ երեկոն ա՜յնքան է խաղաղ,
Երգում է ծառից մի հավք սրտագոհ,
Տեսնում եմ՝ հայրս բարի, մտախոհ,
Ծանոթ շավիղով քայլում է դանդաղ:

Ինձ տուն է կանչում ձայնը մայրենի,
Խաղրս թողնում եմ. երեկո է ուշ.
Գգվում է մայրս, ժպտում է քնքուշ,
Մի արևի պես, որ նման չունի:

Վառվել է նորից օջախն հինավուրց,
Ելնում է ծուխը անուշ խընկի պես,
Խոսում են մերոնք … բայց ննջում եմ ես,
Հոգիս պարուրած հեքիաթ ու անուրջ:

Ոչինչ չեմ տենչում այս ծխից ավել,
Ոչինչ, դատարկված այս մերկ աշխարհում.
Ո՛չ կին երազած, պանծալի անուն,
Ո՛չ գանձ աշխարհի – այս ծուխից ավել:

Կուզեի նստել այս սուրբ ծխի տակ
Ու տեսնել նորից հոգով մանկական
Հարազատներս, որ հիմա չկան,
Եվ հրաշք նորից – աշխարհ բովանդակ …

1926
Երևան